

Մակա Կաճկաճիշվիլի

Ախալցխիսի պետական համալսարան

ՄԻՆՉԵՎ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Տվյալ հոդվածի նպատակն է բարձրացնել այն հարցերը, որոնք ոչ վրացալեզու դպրոցի մանկավարժները համարում են երկլեզու կրթության խանգարիչ գործոններ: Հիմնախնդիրները բարձրացվել են Ախալցխիսի շրջանի ոչ վրացալեզու մանկավարժների կողմից: Նրանց կարծիքն իմանալը և նախատեսելը կարևոր է այնքանով, որքանով որ հենց նրանց մասնակցությամբ է հնարավոր ներդնել երկլեզու կրթությունը: Ի վերջո ընդգծվեց մանկավարժների հետ աշխատելու, նրանց տեղեկացման անհրաժեշտությունը:

Երևում է, որ վեճ չի հարուցում այն հարցը, որ Վրաստանի բոլոր քաղաքացիները պետք է գիտենան պետական լեզուն: Հարցը միայն այն է, թե ինչպես, ինչ ճանապարհով պետք է տիրապետեն նրան:

Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից ոչ վրացալեզու դպրոցներին առաջարկված հեռանկարը՝ երկլեզու կրթության ներդրումը, հասարակությունն ընկալեց և գիտակցեց ոչ միանշանակորեն: Համենայն դեպս, այսպես երևաց «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնի» կողմից «Ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների պաշտպանությունը երկլեզու կրթության միջոցով» նախագծի շրջանակներում անցկացված սեմինարների ժամանակ: Սեմինարներն անցկացվել են միաժամանակ Քվեմո Քարթլիում և Մամցխե-Ջավախքում: Ախալցխիսում, մենք հնարավորություն ունեինք հանդիպել Ախալցխիսի մունիցիպալիտետի ոչ վրացալեզու դպրոցների մանկավարժների հետ: Բնականաբար, այն պատկերը, որ ընդգծվեց այս խմբերի հետ աշխատանքի ժամանակ, ամբողջությամբ չի կարող արտացոլել այն իրականությունը, որ այսօր գոյություն ունի Վրաստանում, սակայն, կարծում ենք, որ կրթությունն այն բնագավառն է, որտեղ ընդհանուրի հետ պետք է ուսումնասիրենք և նախատեսենք

կոնկրետ տարածաշրջանների, խմբերի յուրօրինակությունը ևս: Կարևոր ենք համարում այն հարցերի մասին խոսելը, որոնց մասին իրենց անհանգստությունն արտահայտեցին մանկավարժները, հարցերի մասին, որ նրանք համարեցին երկլեզու կրթության խանգարիչ գործոններ:

Մանկավարժների մեծ մասը ցանկություններ և սպասումներ արտահայտելիս ընդգծեց, որ ցանկանում է սովորել վրացերեն, սակայն չկորցնել հայերենը, սիրում էին իրենց մասնագիտությունը և չէին ցանկանա լքել դպրոցը, պարզվեց, որ ուսուցիչների մեծ մասը երկլեզու կրթությունը հասկանում էր որպես գործընթաց, որի վերջնական արդյունքը անպայման կլինի մայրենի լեզվի, որպես ուսուցման լեզվի, ուսումնական գործընթացից հանելը: Այստեղից ելնելով՝ մանկավարժներին լուրջ մտահոգում էին մոտ ապագայում, մի կողմից՝ մայրենի լեզուն մոռանալու վտանգը և, մյուս կողմից՝ աշխատանքը կորցնելու վտանգը:

Մանկավարժները կասկածով էին նայում նաև նրան, որ այսօրվա իրականության մեջ ոչ վրացալեզու դպրոցների աշակերտները կկարողանային տարբեր ուսումնական առարկաներից վրաց լեզվով անցկացված դասերը հասկանալ: Նրանց համար դժվար էր պատկերացնել այն, որ վրացերենն

աշակերտներին չէր խանգարի տիրապետել կոնկրետ առարկային: Նրանք ունեին իրենց երաշխավորությունը՝ գերադասելի է դպրոցներում ավելացնել վրացերենի ժամերը, քան վրացերեն անցկացված դասերի թիվը:

Մի հանգամանք ևս ընդգծվեց՝ ոչ վրացալեզու դպրոցի ուսուցիչները համարում են, որ պակաս են ծանոթ ուսանման և ուսուցման ժամանակակից մեթոդներին և ռազմավարություններին: Նրանք նշում էին, որ այն ժամանակ, երբ Վրաստանում ակտիվորեն կազմվում է յուրաքանչյուր առարկայի ուսուցման մեթոդիկա, դասագրքերը ևս նոր մեթոդներով են կառուցված, մայրենի լեզվով համապատասխան գրականությունը նրանց համար մատչելի չէ: Նրանք ձեռքի տակ չունեն մեթոդական նյութեր, հնարավորություն չունեն ընդգրկվել մասնագիտական զարգացման ծրագրերի մեջ: Երկլեզու կրթության անցնելով՝ սրան կավելանա նաև երկլեզու կրթության մեթոդաբանությունը: Ուսուցիչները պետական լեզվին համապատասխանաբար չեն տիրապետում, ավելին, նրանք վրաց լեզվով անցկացված սեմինարներին դժվարանում են տեղեկությունը հասկանալ:

Մանկավարժները մտածում են, որ հնարավորություն կունենան հավաստագրման քննությունները մասնագիտությունից հանձնել մայրենի լեզվով: Նրանք պատրաստվում են քննությունների համար և սպասում են ծրագրերի հրապարակմանը: Ովքեր կարող են, օգտվում են վրացերեն հրատարակված դասագրքերից: Ենթադրում են, որ երկլեզու կրթության անցնելու հետ մեկտեղ նրանց համար պարտադիր է դառնում ոչ թե երկու, այլ երեք քննություն հանձնելը: Առարկայի և մանկավարժական կարողությունների քննությանը կավելանա քննությունը վրաց լեզվից: Այս փուլում նրանք անհնար են համարում վրաց լեզվից քննություն հանձնելը:

Մեզ համար անսպասելի էին երկլեզու կրթության նկատմամբ

բավականին տարբերվող վերաբերմունքները, որ երևաց տարրական և բազային-միջնակարգ աստիճանի ուսուցիչների շրջանում: Տարրական աստիճանի մանկավարժներն անհամեմատ ավելի հույսով են նայում կրթության նոր մոդելին, քան վերին աստիճանների ուսուցիչները: Նրանք համարում են, որ նորություններում հեշտ կկողմնորոշվեն և իրենք, և աշակերտները:

Վրաստանում երկլեզու կրթության ծրագրում ընդգրկված դպրոցների թվում էին նաև հանրային դպրոցներ Ախալցխի մունիցիպալիտետից: Փորձարկումն ընթանում էր տարրական աստիճանում:

Մեզ համար անսպասելի էր նաև այն, որ փորձարկմանը մասնակցող դպրոցների ուսուցման վերին աստիճանների մանկավարժները շատ աննշան տեղեկություններ ունեին բարեփոխման շրջանակներում դպրոցում ընթացող երկլեզու ուսուցման մասին: Փորձարկման մեջ ընդգրկված մանկավարժները միաձայն նշում էին, որ իրենց անցկացրած երկլեզու դասը բավականին հաջողակ և արդյունավետ էր, թեպետ ընտրության դեպքում ձեռնպահ էին մնում նման դասեր անցկացնել բարձր դասարաններում:

Շատ մեծ էր ուսուցիչների հետաքրքրությունը անմիջապես ուսումնական ծրագրերի և դպրոցական ժամանային ցանցի նկատմամբ: Երկլեզու կրթության պայմաններում խանգարիչ գործոններից մեկն են համարում այն, որ ուսուցման գործընթացում վրաց լեզվի ընդգրկումն ավել ժամանակ է պահանջում: Այդ պատճառով կառաջանա վտանգ, որ մանկավարժը չափորոշչով նախատեսված ծրագիրը չի հաղթահարի: Նրանց երաշխավորությամբ, պետք է ավելանան այն առարկաների ժամերը, որոնք երկլեզու ուսուցմամբ են ուսուցանվում: Մյուս կողմից՝ առաջ քաշվեց դասացուցակում առարկաների վերաբաշխման հարցը, ինչը ժամերի աճման հետ բավականին կբարդանա:

Անմիջապես ուսուցման գործընթացի հետ էր կապվում ևս մեկ կարևորագույն հարց: Երկլեզու կրթության փորձարկային ծրագրի մեջ ընդգրկված դպրոցների փորձի քննարկման ժամանակ ընդգծվեց, որ դպրոցների մի մասում կոնկրետ առարկայից, օրինակ՝ բնությունից, երկու դաս էր անցկացվում մայրենի, այնուհետև պետական լեզվով: Համապատասխանաբար, դասը երկու ուսուցիչ էր անցկացնում՝ բնության և վրացերենի ուսուցիչները: Իսկ դպրոցների մյուս մասում բնության համար հատկացված երեք ժամն անց էր կացնում մեկ մանկավարժ, երեք ժամի ընթացքում էլ օգտագործում մայրենին և երկրորդ լեզուն, նախօրոք պլանավորված, չափավորված: Բնականաբար, երկու դեպքում էլ նախատեսված էր դպրոցում եղած ռեսուրսը: Այս տեսակետից գնահատեցին իրենց դպրոցները սեմինարի մասնակից ուսուցիչները: Ընդգծվեց ոչ միանշանակ պատկեր: Չկար ոչ մի այնպիսի դպրոց, որը կկարողանար բոլոր դասարաններում կամ առարկաներից որևէ մեկ տարբերակ իրականացնել: Դպրոցներում շատ քիչ է այն ուսուցիչների թիվը, որը տիրապետում է պետական լեզվին: Ելնելով այս իրականությունից՝ մանկավարժները համարում են, որ դպրոցները հավանաբար երկու դեպքերն էլ միաժամանակ կօգտագործեն:

Նույն հարցի հետ է կապված նաև երկրորդ հիմնախնդիրը: Ինչպես է պլանավորվում անցումը երկլեզու կրթության՝ միաժամանակ բոլոր դասարաններում, միայն կոնկրետ դասարաններում և առարկաներից, թե՞ միայն առաջին դասարանում: Որքանով են սրանք դպրոցի վճռվելիք հարցեր: Գոյություն ունեն արդյոք համապատասխան չափորոշիչներ և դասագրքեր:

Ուսուցիչների շրջանում հետաքրքրություն է առաջացնում նաև ֆինանսավորման հարցը: Չնայած նրան, որ համարյա բոլորը տիրապետում էին տեղեկատվության երկլեզու դպրոցների

համար ավելացված ֆինանսավորման վերաբերյալ, միննույն է, մտածում էին, որ հավելավճարը կստանար նա, ով կգա: Իսկ որևէ մեկի գալն անհետաձգելի անհրաժեշտություն են համարում:

Ներկայացված թվարկումով հիմնականում սպառեցինք այն հարցերը, որ անհանգստացնում կամ հետաքրքրում էին երկլեզու ուսուցման հարցերի հետ կապված անցկացված սեմինարներին Ախալցխեի մունիցիպալիտետի ոչ վրացալեզու դպրոցներից հրավիրված մանկավարժներին: Հինգ

աշխատանքային օր քայլ-քայլ փորձում էինք նրանց հետաքրքրող հարցերին անդրադառնալ: Որոշ հարցերի մեջ, որ նախատեսել էինք ծրագրով, խորացանք, մանրամասնորեն քննարկեցինք, որոշ հարցերի վերաբերյալ տեղեկություններ մատուցեցինք, որոշ դեպքերում մատնանշեցին տեղեկատվության որոնման ուղիները: Կարծում ենք, սեմինարը հաջող ստացվեց և կատարեց իր գործառույթը, թեպետ այս անգամ մեր նպատակը նրա գնահատումը չէր: Լավ հասկանում ենք այն պատճառները, որ առաջացրել են վերոթվարկյալ հիմնախնդիրները: Դրանցից շատերը բացահայտ են, և հաճախ ոչ էլ դրանց վճռումն է բարդ: Գոյություն ունեն նաև պատասխաններ շատ հարցերի:

Մենք հնարավորություն ունեինք հանդիպել մանկավարժների այն փոքր խմբի հետ, որոնք իրականում պետք է իրականացնեն բարեփոխման շրջանակներում պլանավորված երկլեզու ուսուցումը: Որքան էլ ճշգրիտ կերպով ծանոթ լինենք երկլեզու կրթության մոդելներին կամ սպառիչ պատասխանենք ուսուցիչների հարցերին, մեր առջև դրված լինի այլ երկրների հաջող փորձը, կարծում ենք, երկլեզու կրթության իրականացումը կսկսվի միայն այն ժամանակ, երբ ոչ վրացալեզու դպրոցների ուսուցիչները կկարողանան իրենք պատասխանել հարցերին, իրենք գտնեն անհրաժեշտ մոդելը, կոնկրետ կերպով կարողանան գիտակցել իրենց դպրոցի անհրաժեշտությունները: Մինչ այդ

անհրաժեշտ են շատ հաճախակի հանդիպումներ, առավել ևս այն պայմաններում, երբ նույնիսկ մեկ դպրոցի շրջանակներում ուսուցիչները, փաստորեն, չեն փոխհամագործակցում: Մինչ այդ անհրաժեշտ է մանկավարժների համար պատրաստել անհրաժեշտ մեթոդական նյութ երկու լեզուներով էլ,

անհրաժեշտ է կատարելագործել դասագրքերը և դրանցով աշխատելու մեթոդները, սահմանել յուրաքանչյուր տարածաշրջանի յուրօրինակությունը և նախատեսել այդ և այլն, մինչ այդ ճիշտ նույնքան է անհրաժեշտ, որքան մինչև երկլեզու կրթությունը Վրաստանում:

Maka Kachkachishvili

For Bilingual Education

ABSTRACT

The aim of present article is to introduce issues, that are problematic for bilingualism development in Non-Georgian schools. The main area of the article is described by non-Georgian school teachers in the region of Akhaltsikhe Due to the complexity of the issue their participation is very important for future bilingualism development. The final part presents the great demand of teachers informing process during working with them.